Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հանրային կապերի և տեղեկատվության բաժնում (այսուհետ՝ Բաժին) փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքի համառոտ նկարագիրը

1) նոր ստեղծվելիք կայքի կառուցվածքի, բովանդակության, ոճի, ձևավորման և գործառույթների վերաբերյալ առաջարկների ամփոփում և վերջիններիս տեխնիկական լուծումների ներդրում՝ wordpress հարթակի հնարավորությունների միջոցով,

2) գործող կայքի վարման, տեղեկատական նյութերի ստեղծման, թարգմանության և կայքում տեղադրման աշխատանքներին մասնակցություն, այդ թվում՝ արհեստական բանականության գործիքակազմի կիրառությամբ,

3) բարձրագույն կրթության և գիտության ոլորտում իրականացրած բարեփոխումների պատշաճ բազմալեզու լուսաբանում՝ համապատասխան տեղեկատվական նյութերի պատրաստման, թարգմանության և տարածման միջոցով,

4) գիտական նախագծերի աջակցության մրցույթների հրավերների փաթեթների անգլերեն տարբերակի մշակում, ինչպես նաև մրցույթների վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում և վիզուալ ձևավորում գրաֆիկական ծրագրաշարերով (Figma, Adobe Photoshop, Adobe Lightroom),

5)) ««Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքով հաստատված՝ օտարերկրյա ուսանողների թվի ավելացմանը և աշխարհագրության ընդլայնմանն ուղղված միջոցառումներին աջակցության նպատակով՝ «Ուսումնառություն և հետազոտություններ Հայաստանում» (Study and Research in Armenia) օտարալեզու հարթակի վարում (ռուսերեն և անգլերեն) Կոմիտեի նորաստեղծ կայքում՝ համապատասխան տեղեկավական բովանդակության ստեղծմամբ և գրաֆիկական ձևավորմամբ,

6) զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական ցանցերում կոմիտեի գործունեության ոլորտին առնչվող հրապարակված նյութերի հավաքագրում և վերլուծություն, այդ թվում՝ մասնագիտական ծրագրային ապահովման կիրառությամբ:

Փորձագետին ներկայացվող պահանջները

1. Բարձրագույն կրթություն՝ հումանիտար կամ հասարակական գիտությունների ոլորտում,

2. օտար լեզուների (ռուսերեն և անգլերեն) գերազանց իմացություն,

3. տեղեկատվական և ստեղծարար տեքստեր գրելու հմտություն,

4. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով ու ծրագրաշարերով աշխատելու ունակություն,

5. գրաֆիկական դիզայնի և կայքի տեխնիկական սպասարկման նախնական գիտելիքներ,

6. «Զանգվածային լրատվության մասին», «Տեղեկատվության ազատության մասին» օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի

26-ի «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» N 1521-Ն որոշման և իր գործառույթների իրականացման ապահովման համար անհրաժեշտ իրավական այլ ակտերի իմացություն:

Փորձագետ ներգրավելու ժամկետը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

Փորձագետի պարտականությունները

1) բարեխղճորեն կատարել ստանձնած աշխատանքները,

2) սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների մասին հաշվետվություն,

3) պահպանել Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4) պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5) իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկը

1. լուսանկար 1 հատ (3x4 չափի),
2. դիմում (ձևը կցվում է),
3. անձնագիր (ՀԾ համարանիշ),
4. դիպլոմ (դիպլոմներ),
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ,
6. զինվորական գրքույկ (առկայության դեպքում),
7. հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշման հավելվածի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (ձևը կցվում է),
8. ինքնակենսագրություն:

Փորձագետի ընտրությունը կկատարվի դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ յուրաքանչյուր օր ժամը 09:30-ից մինչև 12:30-ը (ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 703 սենյակ, Անձնակազմի կառավարման բաժին):

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (+374 10) 210140 (ներքին՝ 107) հեռախոսահամարով:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2024 թվականի օգոստոսի 27-ը: